ՀՏԴ: 947.925.1(063)

DOI: 10.54503/0135-0536-2025.3-287

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ. ԱՐՑԱԽԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԲԱՆԱՎՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» ԽՈՐԱԳՐՈՎ*

Հոկտեմբերի 16–18-ը ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում (ԳԱԱ) տեղի ունեցավ «Տեղահանություն և հիշողություն. Արցախի շարունակական ճգնաժամը բանավոր պատմություններում» խորագրով միջազգային գիտաժողովը, որը կազմակերպվել էր ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի (ՀԱԻ) մշակութային մարդաբանության բաժնի, կիրառական մարդաբանության գիտահետազոտական խմբի, «Հազարաչեն» ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոնի և Ֆրանսիայի – Institut National des Langues et Civilisations Orientales (INALCO)՝ *համալսարանի նախաձեռնությամբ: Գիտաժողովի նպատակն էր՝ բազմակողմանիորեն քննարկել 2020 թ. Արցախի դեմ սանձազերծված պատերազմը, դրան հաջորդած Արցախի փաստացի պաշարումը, 2020–2023 թթ. ընթացքում ծրագրված և 2023 թ. սեպտեմբերին իրականացված Արցախի ամբողջական հայաթափման ու բնակչության բռնի տեղահանման արտացոլումը, մեկնաբանումը և իմաստավորումը միջազգային ու տեղական լրատվական դաշտում, հասարակական քննարկումներում և, հատկապես, բանավոր պատմությունների միջոցով փոխանցվող հիշողության շերտերում: Քննարկման առանցքում եղան ոչ միայն հիշողության բովանդակային և տեղեկատվական կառուցվածքները, այլև այն մեխանիզմներն ու ձևերը, որոնցով փոխանցվում է ապրած փորձը, ինչպես նաև հիշողություն կրող խմբերի դերակատարումը, պատերազմի և արտաքսման քաղաքականության տրամաբանությունը, դրանց սոցիալական, մշակութային ու հոգեբանական հետևանքները:*

Գիտաժողովը մեկնարկեց ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում: ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանի և ՀԱԻ տնօրեն Արսեն Բոբոխյանի բացման խոսքով: Բացման խոսքում նրանք շեշտադրեցին Արցախի վերաբերյալ գիտական քննարկումների հրատապությունը՝ ընդգծելով, որ արցախյան մշակութային և պատմական ժառանգության հարցը դուրս է գալիս տարածաշրջանի սահմաններից ու շոշափում է հայկական ինքնության և գոյության հիմնարար շերտերը:

Գիտաժողովին գրանցված էին հետևյալ մասնակիցները, որոնց մի մասը՝ առցանց:

Օր առաջին

Հրանուշ Խաչատրյան *(ՀԱԻ) –«Միջնադարյան աղբյուրների տեղեկությունները Առան, Աղվանք, Ռան, Խաչեն, Ղարաբաղ անունների, դրանց տեղադրության և իմաստի շուրջ»:* Հակոբ Սիմոնյան *(Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն) –«Ծիծեռնավանքը պեղումների*

---

* *Ներկայացվել է 21. XI. 2025 թ., ընդունվել է տպագրության 17. XI. 2025 թ.:*

լույսի ներքո»: Լեոնիկ Հովհաննիսյան *(ՀԱԻ),* Մխիթար Գաբրիելյան *(Երևանի պետական համալսարան՝ ԵՊՀ) – «Արցախի հայ բնակչության բոնագաղթը 18-րդ դարի վերջին – 19-րդ դարի սկզբին տարածաշրջանում միգրացիոն գործընթացների համատեքստում»:* Նժդեհ Երանյան *(Հայաստանի պատմության թանգարան՝ ՀՊԹ) – «Մշակութային ժառանգությունը որպես հակամարտության դաշտ. Արցախի նախաքրիստոնեական մշակույթի օրինակը»:* Գագիկ Զիլինգարյան *(Պաղմանի Պիտերի անվան կաթոլիկ համալսարան՝ ՊՊԿՀ) – «Խորհրդային մոտեցումները ինքնավարությանը. Լեռնային Ղարաբաղի դեպքի ուսումնասիրություն»:* Հրանուշ Խաչատրյան *(ՀԱԻ) – «Խորհրդային Ադրբեջանի մշակութային քաղաքականությունը ըստ պաշտոնական փաստաթղթերի՝ որպես արցախյան ճգնաժամը նախապատրաստող գործոն»:* Թալին Տեր-Մինասյան (INALCO) – *«1980-ականների վերջին Ղարաբաղյան շարժման ի հայտ գալը. Մուրադյան / Սարգիսյան սպիտակ թուղթը որպես պատմական աղբյուր»:* Հայկուհի Մուրադյան *(ԵՊՀ, ՀԱԻ) – «Պատերազմը, բռնի տեղահանությունը և արվեստը. արցախցի ժամանակակից արվեստագետների հիշողությունները և ինքնության վերախմաստավորումը»:* Մարիամ Պետրոսյան *(ՀՊԹ) – «Արցախ 2020. Արեգ Բալայանի վավերագրական լուսանկարները, որպես պատերազմի վիզուալ վկայություն»:* Ամալյա Դիլանյան *(ՀԱԻ),* Նոնա Շահնազարյան *(ՀԱԻ) – «Դեպորտացիա, հիշողություն և հաուն-տոլոգիա. խորհրդանշական առարկաների և արվեստի գործերի բազմապատկում՝ ռետրավմատիզացիա, թե՞ տրավմայի հաղթահարում»:*

Օրվա ավարտին ցուցադրվեց Արսեն Եսայանի *«Գոյամարտ» վավերագրական ֆիլմը, որը հարստացրեց գիտաժողովի թեմատիկ շրջանակը՝ ներկայացնելով Արցախից բռնի տեղահանված բնակչության ճակատագիրը, մարդկային դիմադրողականությունը և գոյապայքարի պատմությունները:*

Օր երկրորդ

Հասմիկ Կնյազյան *(ՀԱԻ) – «Թվանշային հայրենիքներ. Ֆեյսբուքը որպես համայնքային արխիվ Արցախում քաղաքական ջնջմանը դիմադրավելու համատեքստում»:* Նաիրա Երկանյան *(Հայաստանի պետական մանկավարժական համալսարան) – «Տեղահանության փորձառությունը. Արցախից Հայաստան տեղափոխված ավագ դպրոցականների հիշողությունն ու տրավման»:* Կարինե Ալեքսանյան *(Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն) – «Արցախյան հիշողությունն ու պատմությունը կրթական համակարգում»:* Զարուհի Համբարձումյան *(ՀԱԻ) – «Արցախյան պատերազմի «հիշողության անկյունները» դպրոցներում»:* Գոհար Ստեփանյան *(ՀԱԻ) – «Անցումը բյուրոկրատականից կենսագրականին. փաստաթղթերը և հիշողությունը արցախյան տեղահանության համատեքստում»:* Հովիկ Ավանեսով *(ԳԱԱ պատմության ինստիտուտ՝ ՊԻ) – «Ադրբեջանի կողմից Արցախում իրականացվող հայկական մշակութային ժառանգության յուրացման և ոչնչացման քաղաքականության լուսաբանումը Ֆրանսիայի հայկական պարբերական մամուլում (2020–2025)»:* Նաղը Թէմիր-Պէյլէրեան (INALCO) – *«Բանավոր պատմություններ. պատմություններ Լեռնային Ղարաբաղի բախումին մասին՝ հետցեղասպանական հասարակության մեջ. Թուրքիո պարագան»:* Գայանե Շադոյան *(ՀԱԻ) – «Արցախի բռնի տեղահանության խոսույթը Հայոց ցեղասպանության հիշողության համատեքստում»:* Լիլիթ Սաղաթելյան *(ՊՊԿՀ) – «Կորստի զուգահեռ պատմություններ. նախիջևանահայերի բանավոր վկայությունները 1988-ից հետո»:* Նոնա Շահնազարյան *(ՀԱԻ) – «Արցախի 2023 թ. բռնի տեղահանության հիշողությունը չորս ֆոկուս-խմբերի պրիզմայով. դի-*

տարկումներ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում»: Վիկտորյա Խուրշուդյան, Պոլետ Սամուելյան, Անահիտ Տոնապետյան *(ԻՆԱԼԿՈ–ՍԵԴԼ–ԳՀԱԿ, Սորբոնի նոր համալսարան – Լատտես–ԳՀԱԿ) – «Արցախի տեղահանված լեզուները. հայերեն բարբառներում լեզվաբանական փոփոխությունների փաստագրման և նկարագրության խնդիրները»:* Հրաչ Մարտիրոսյան *(Վայքուրզի համալսարան),* Գայանե Զոփուրյան *(Վանաձորի պետական համալսարան),* Մանե Ղուկասյան *(ԵՊՀ),* Անի Սարուխանյան *–«Շուշանից մինչև խնջլոզ. բուսանունների դիվաբանական զուգորդումները Արցախի ժառանգության մեջ»:*

Գիտաժողովի երրորդ օրվա նիստը անցկացվեց Հնագիտության և ազգագրության ինստիտուտում:

Էվիյա Հովհաննիսյան *(ՀԱԻ) – «Վաճառելով պատերազմը և տրավման. Ղարաբաղյան երկրորդ պատերազմի առևտրայնացումը Հայաստանում»:* Ստեփան Պապիկյան *(Տնտեսագիտության ինստիտուտ) –«Արցախի էներգետիկան»:* Մհեր Հարությունյան *(ՊԻ) – «Արցախի ռազմական շինարարության առանձնահատկությունները չճանաչված պետության գոյատևման համատեքստում և դրանց արտացոլումը հիշողության դիսկուրսում»:* Արմինե Տիգրանյան *(ԵՊՀ) –«Մշակույթի իրավունքի խախտումները արցախահայության բռնի տեղահանության համատեքստում. Արցախի բնապատմական միջավայրից օտարում, ավանդական կենսընթացի խեղումներ, համայնքների կազմաքանդում, ինքնության պահպանման և վերստեղծման խոչընդոտներ»:* Էլինա Մխիթարյան *(Հայաստանի ամերիկյան համալսարան) –«Ինքնությունը, հիշողությունը, ոչ նյութական մշակութային ժառանգությունը որպես փախստականների իրավունքների պաշտպանության մեխանիզմներ ու իրացման գործիք»:* Մարիամ Հերգնյան *–«Անվտանգության և առաջնային պահանջմունքների բացակայությունը որպես հավաքական տրավմայի գործոն. Արցախի շրջափակման հոգեբանական վերլուծություն»:* Գրիգորի Այվազյան *(ՀԱԻ) –«Ղարաբաղի (Արցախի և Ուտիքի) հայերի էթնիկական ծագման աղավաղման հարցերն ադրբեջանական պատմագրության մեջ՝ ուղի-աղվանական խնդրի լույսի ներքո»:* Լուսինե Անգելուշ *(ՀԱԻ) – «Վերաիմաստավորելով «տունը» բռնի տեղահանության պայմաններում»:* Անուշ Պետրոսյան *(Տամպերեի խաղաղության հետազոտությունների ինստիտուտ) – «Վերակառուցելով կյանքը վտարանդության մեջ. հիշողությունն ու տան որոնումը արցախահայերի շրջանում»:* Մարինա Գալստյան *(Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն) –«Երիտասարդների լռությունը որպես հիշողության և համակեցության ռազմավարություն հետպատերազմյան Հայաստանում»:* Միհրան Գալստյան, Գայանե Հակոբյան *(ՀԱԻ) –«Անցյալի հիշողություններ և ապագայի սպասումներ. Արցախից 2023 թ. բռնագաղթածների միգրացիոն ռազմավարությունների սոցիոլոգիական վերլուծություն»:*

Զեկուցումների շուրջ ծավալվել են աշխույժ քննարկումներ:

ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող, հայցորդ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ բանահյուսություն, ազգագրություն, XVIII–XIX դդ. հայ գրականություն: Հեղինակ է 5 հոդվածի: ORCID:0009-0006-8185-149X.
gevorg.gyulum.1995@gmail.com